

ՎՐԱՅ ԿԵՆՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մի նոր կոմեդիա—նոր արշաւանք հայագէտ պրոֆեսորների ու հայերի դէմ—
Պետ. Ուսիկաշվիլու մահը:

Մեր ընթերցողներին ծանօթ վիպագրող պ. Կլդիաշվիլին տպագրել է «Մօամբէ» ամսագրում դարձեալ մի նոր աշխատութիւն «Դարիսպանի նեղ դրութիւնը» վերնագրով: Դա թատրոնի համար յարմարեցրած կոմիկական պատկերների մի շարք է, վերցրած Իմերեթի աղքատ ազնուականների կեանքից: Այդ դժբախտ մարդկանց ցաւերից մէկն էլ կայանում է նրանում, որ նրանք միշտ... մարդու տալու շատ աղջիկներ են ունենում: Տուն չկայ, ինչպէս բացատրում է գրուածքի գլխաւոր հերոս Դարիսպանը,—տուն չկայ, որ երեք կամ չորս նշանելու աղջիկ չունենայ, իսկ նրանց ուզող ոչ մի տեղ չէ երևում... Այժմեան երիտասարդները ամեն կերպ փախչում են ընտանիք գոյացնելու մտքից... Առաջները աղջկայ տէրերը դիմում էին գոնէ մոցիբուլներին, միջի-մարդերի օգնութեան, բայց այժմ նրանք էլ իրանց արհեստը ձգել են, որովհետև այդ արհեստը այլևս եկամուտ չէ բերում... Այդ է պատճառը, որ մեր դժբախտ՝ չորս հասած աղջկայ հայր Դարիսպանը իր համար բան ու գործ է շինել ման ածելու ամեն տեղ իր անդրանիկ աղջիկ Կարոժնային, որպէսզի «սաղացնի» նրան մի կերպով մի որևէ երիտասարդի վրայ... Ահա այժմ էլ մենք տեսնում ենք նրան իր ազգականուհի Մարթայի տանը չարաչար աշխատելիս նոյն նպատակի համար, բայց նրա դժբախտութիւնից այդ տանտիկինը իր մօտ հիւր եկած երիտասարդ Օսիկօի ուշադրութիւնը կամենում է դարձնել միմիայն իր մի ծանօթ և հովանաւորեալ աղջկայ՝ Նատալիայի՝ վրայ, որին դիտմամբ այդ նպատակով առաջուց կանչել է իր մօտ... Նատալիայի հետն է իր մայր Պելագիան, որ տէր է երեք հասած աղջկայ, աղքատ ու այրի, ուրեմն աւելի դժբախտ, քան Դարիսպանը, որը յամենայն դէպս տղամարդ է: Եւ ահա այդ երկու դժբախտ խոյանների—Դարիսպանի ու Պելագիայի (Մարթայի հետ միացած)—մէջ սկսւում

է փեսացու Օսիկօի ներկայութեամբ մի անօրինակ, օրհասական մրցում՝ նրան անպատճառ իրանց աղջկան հաւանեցնելու, իրանց փեսան շինելու... Խորամանկ երիտասարդը տեղեկանալով ներկայ եղող մի տղամարդ հիւրից, որ երկու թեկնածու օրիորդներն էլ աղքատ են ու անօթիտ, քթի տակը ծիծաղում է և Մարթայի ծածուկ խնդիրքին՝ որ ձեռքից բաց չթողնէ Նատալիայի պէս մի պատուական հարսնացուին—սիրալիբ կերպով պատասխանում է. «Ես ձեր խաթրը չէի կտորի, տիկին, եթէ... նշանուած չլինէի»...

—Ի՞նչ, նշանուած,—բղաւում է խեղճ կինը օձից խայթուածի պէս և ապա դիւանագիտօրէն աւելացնում. Թնչու հապա առաջուց չէիք ասում, որ մի լաւ, սրտալի ուրախանայինք...

Պ. Կլբիաշվիլու այդ նոր գրուածքը պէտք է դասել նրա լաւագոյն գործերի շարքը. նա խորը տպաւորութիւն է թողնում թէ իր հիմնական մտքով և թէ իր հերոսների հոգեկան վիճակով: Մարդու տալու աղջկերքը փեսացու չեն ճարում, տանը պառոււում են», ինչպէս գանգատում են շարունակ Դարիսպանն ու Պելագիան, նրանց առաջ փակուած է հասարակական ամեն ասպարէզ, ամեն օր նրանց երեսով են տալիս, որ անտանիլի բեռ են ծնողների համար, նրանց ստիպում են ամեն տեսակ ստորացնող դեր յանձն առնել՝ փեսացուներին գըրաւելու համար... «Ի՞նչ օգուտ ստացանք հիմայ,—ասում էր խեղճ Նատալիան իր մօրը՝ Օսիկօի նշանուած լինելը լսելուց յետոյ—որ այսպէս կապկի նման թրև տուիք ինձ մի ինչ—որ անծանօթ-անտէրի մօտ... Աւելի լաւ է մեռնել, քան ձեզ պէտքների ձեռքին մնալ... Ինքներդ չէք հասկանում, ինչ էք անում... Հէնց որ մի «անտէր-մուսորէկին» կը տեսնէք, իսկոյն գլխներդ կը կորցնէք»... Կարո՞՞նան լսելով իր հայր Դարիսպանի անվերջ գանգատներն՝ աղջկան մարդու տալու հոգսի համար կրած նեղութիւնների մասին—խորապէս վշտացած բացազանչում է. «Ես ի՞նչ մեղաւոր եմ, պարոն, որ շարունակ երեսովս ես տալիս»:—«Հապա ես ո՞ւմ համար եմ այսքան չարչարում»,—հարցնում է հայրը:—«Ես քեզ չեմ խնդրում, որ ինձ մարդու տաս... Ես կը մնամ այսպէս ինձ համար»...—«Ի՞ր համար կը մնայ այդպէս,—հեզնում է նրան հայրը—հը՞մ... Ի՞նչ կերակրել, պահել հարկաւոր չէ արդեօք, աղջիկ պարոն... էլ չեմ կարող պահել ձեզ, դաւակ, էլ չեմ կարող»...

Նրանցից ոչ պակաս ապերժանիկ ու կարեկցութեան արժանի են նաև դրանց ծնողները, այդ մանր, չքաւոր ազնուականները, որոնք ոչ մի հնարաւորութիւն չունեն գուցէ փողով ի-

րանց կողմը քաշելու արժաթասէր փեսացուներին: Դարիսպա-
նի խօսքերը և նրանց տոնը յաճախ այնպիսի տպաւորութիւն
են թողնում, որ կարծես նա ամեն բոպէ պատրաստ է յարձա-
կուելու հէնց առաջին պատահած երիտասարդի վրայ և՛ նրա կո-
կորդին հուպ տալով՝ պահանջելու, որ անպատճառ իր աղջկան
առնի, տանի... Մարթայի տանը քիչ էր մնում որ նա ծեծէր
Պելագիային, որ համարձակում էր մրցել իր հետ Օսիկօին
գրաւելու մէջ... Նոյն Մարթային այդ հպարտ, զօրեղ կամքի
տէր մարդը յուսահատութեամբ ասում է. «Ասում ես, թէ ըշ-
տապում եմ... Բա թ'նչ անեմ, որ օրէցօր աղջկերքս ձեռքիս
պառաւում են... Չեմ կարող հանգստանալ, մինչև որ զրանց
իրանց տէրերին չյանձնեմ... Չեղաւ, չկարողացայ պատահել
այդ կոտորուածներին (փեսացուներին)... Բայց վնյ թէ
Աստուած գրկած ունենայ աղջիկներին այդ բախտից...
Վնյ թէ նրանց կենտ ստեղծած լինի»... Խեղճ Պելագիան էլ
օրուգիշեր հանգիստ չուէի իր աղջիկներին դարձրից: Երբ նա
առաջին անգամ տեսնում է Մարթայի պատուհանից՝ հիւր ե-
կող Օսիկօին, բացազանչում է. «Ողորմիր, գթան ինձ վրայ,
Տէր... Աստուած, նայիր թշուառիս անտանելի կացութեանը...
Բախտի արժանացրո՛ւ Նատալիայիս... Տէր, բարի աչքով նայել
տուր (Օսիկօին) զաւակիս վրայ»...

Այդպիսով պ. Կլդիաշվիլին շօշափում է մի կարևոր սո-
ցիալական հարց ու շօշափում այն հմուտ կերպով, անպայման
գրաւելով դէպի նա ընթերցող հասարակութեան ուշադրու-
թիւնը:

Ինչպէս և պէտք էր սպասել, «իվերիականներն» սկսեցին
արդէն մի կատաղի արշաւանք երիտասարդ գիտնական պ. Ի.
Ջաւախիշվիլու և նրա ուսուցիչ պ. Ն. Մարրի դէմ: Եւ որով-
հետև հարցը վերաբերում էր «հայերի պաշտպաններին», — ուս-
տի և փայտի մի ծայրը անհրաժեշտաբար դիպաւ նաև այդ
պաշտպանեալների մէջքին... Առաջին թնդանօթը, ինչպէս և
պէտք էր սպասել, արձակեց՝ այդպիսի գործերում իր չափա-
զանց անտաղանդութեամբ յայտնի՝ 65-ամեայ տաղանդաւոր
բանաստեղծ պ. Ակակի Ծերեթեւին: Մեր ընթերցողներին լաւ
ծանօթ այդ նշանաւոր վրացին էր, որ 1898 թուին հրատարա-
կեց հայերի դէմ՝ իր «Կրեբուլի» ամսագրում՝ իր անդրանիկ
անաշող պատերազմը: Այժմեան նոր արշաւանքը հայագէտ
պրոֆեսսորների ու հայերի դէմ պ. Ծերեթեւին սկսել է առայ-
ժըմ երեք մեծ բանասիրականով («Իվերիա», №№ 128, 129 և

130), բայց դրանք, ինչպէս երևում է գրուածքի ոգուց, դեռ երկար կը շարունակուեն: Իր այդ նոր, առաջուանից աւելի անհիմն ու անպատուարբեր հրապարակախօսական-բանակոռուկան աշխատութեանը նատուել է «Վրացատեացնեբ» մեծադորդ վերնապիւրը:

Իր առաջին բանասիրականը պ. Մերեթելին սկսում է ուղղակի մի այլաբանական հեքիաթով, առանց որևէ առաջաբանի: Եղել է չի եղել մի ունևոր, Ղվթիսիա (Աստծուն պատկանող) անունով մարդ: Մի օր հեռու աշխարհից եկել է դրա մօտ մի մերկ, քաղցած, թշուառ մարդ՝ Սխվիսիա (ուրիշին պատկանող, օտար) անունով: Ղվթիսիան եղբայրացնում է իրան օտարականին, տալիս է նրան տեղ ու ազատ գործելու ասպարէզ: Եղբայրութեան գլխաւոր պայմանն էր, որ առաջինը շարունակէր պարապել իր երկրագործութեամբ, իսկ վերջինը ձեռք զարկէր վաճառականութեան և արհեստներին: Սխվիսիան կարճ միջոցով առաջ գնաց, հարստացաւ և մտածեց զրկել իր բարեբարին նրա բոլոր ունեցած-չունեցածից... բայց որովհետև դրա ժամանակը դեռ չէր հասել և Սխվիսիայի ցեղակիցների «գարունը դեռ չէր բացուել», Սխվիսիան որոշեց իր այդ դիտաւորութիւնը թագցնել իր սրտի խորքում և որդոց որդի աւանդել իր հետնորդներին, որ մի օր իրագործուի նրա չար մտքը: Անցան այդպիսով դարեր, Ղվթիսիա շվիլիւնեբըն ու Սխվիսիա շվիլիւնեբը շարունակում էին արտաքուստ իրանց փոխադարձ բարեկամութիւնը: Հասաւ վերջապէս վաղուց սպասուած գարունը... Սխվիսիա շվիլիւնեբը՝ մեծ ու փոքր, մարդ ու կին, աշխարհային ու հողեորական՝ ձեռք զարկեցին միաժամանակ և ուժգին թափով իրագործելու իրանց նախահօր աւանդած չար ծրագիրը... Չարամիտ Սխվիսիա շվիլիւնեբը յանդիմանուելով իրանց բարեբար Ղվթիսիա շվիլիւնեբից՝ աշխատում էին ուրանալ իրանց յանցանքն ու պաշտպանուել, բայց վերջը համոզուելով, որ արդարանալը այլևս անկարելի է, լռեցին... բայց լռելուն պէս նրանք գտան իրանց համար մի քանի անփոյթ ու անսիրտ Ղվթիսիա շվիլիւնեբ, որոնց և յանձնեցին պաշտպանելու իրանց դատը այդ փաստաբանների հայրենակիցների առաջ... Փաստաբանները կուրացած անձնական շահերով՝ սկսեցին ոչնչացնել իրանց հայրենիքի ծաղիկները...

Մեր ընթերցողների համար իհարկէ պարզ է, որ այդ շաւաճան փաստաբանները ոչ այլ ոք են, բաց եթէ պ. պ. Ն. Մարր և Ի. Չաւախովը... Իսկ հեքիաթի մասին հեղինակը շտապում է հէնց միւս օրը, իր երկրորդ բանասիրականու

ասել, որ նա «ճշգրիտ հայելի է վրաց և հայոց յարաբերութիւնների՝ սկսած այն գլխից և մինչև այսօր»...

Այդ երկրորդ բանասիրականը նուիրուած է Մարրին, իսկ երրորդը — Ջաւախիշվիլուն: Դրանք պ. Ծերեթելու ասելով «մոռացան Աստուծուն և դէպի վրացիքը ունեցած թշնամութեան և նրանց զրպարտելու մէջ գերազանցեցին ուրիշներին»: Պ. Մարրը, աւելացնում է նա, ստեղծեց «Վրացատեհացների դրպրոց» (շկոլա): Ապա պ. Ծեր. թոյլ է տալիս իրան մի անօրինակ անտարբերութիւն. նա բերում է մանրամասն կերպով իր 1898 թ. հայերի դէմ գրածների բովանդակութիւնը, իսկ Մարրի պատասխանները դնում է ընթերցողի առաջ այն աստիճան խեղաթիւրած, որ յարգելի պրոֆեսսորը կերպարանափոխուում է մի անմիտ ու ողորմելի մարդու... Չնայելով այդքան խեղաթիւրումներին՝ նա դարձեալ աւելացնում է, որ պրոֆեսսորը դիտմամբ ճշմարտութեան դէմ գնաց, անպէտք փաստաբանի պէս անմիտ սոփեստութիւններ արեց, իրան (Ծերեթելուն) արհամարհանքով վերաբերուեց և այլն և այլն... Նա մեղադրում է նոյնպէս, որ հանգուցեալ Ջանշեանին աջակցեց Ակակի Ծերեթելու և վրաց դէմ աննպաստ բաներ գրելու նրա հրատարակած «Շղթայրական օգնութեան» մէջ: Իսկ այդ գրքի նպատակը, մեր բանաստեղծի համոզմամբ, չէր միայն նիւթական օգնութիւն հասցնելը թշուառներին, այլ նա կոչուած էր «բարձրացնելու հայերի անունը աշխարհի առաջ այլևայլ բեկլամներով և նուաստացնելու ու ստորացնելու միաժամանակ վրացիներին»...

Նոյնպէս անհասկանալի ու անտրամաբան կերպով է վարուում պ. Ծերեթելին Մարրի համամիտ երիտասարդ պրիււատդոցենտ Ջաւախովի հետ: Վերջինս, ինչպէս մեր ամսագրի անցեալ համարում հաղորդեցինք, չէ ընդունում վրացի հայրենասէրներին ու պ. Գոգեբաշվիլու այն տարօրինակ պահանջը, թէ պէտք է ժողովրդի համար գրել վրաց ազգի շինծու, կեղծիքներով լի, ներբողական պատմութիւնը: Նա չէ ընդունում նոյնպէս պ. Գոգ. կատարած մի շարք անարդար յարձակումները (գլխաւորապէս իր «Правда о Тифлисе» գրքում) հայերի դէմ: Պ. Ծերեթելին իր ահագին բանասիրականը լցրել է այն ծառայութիւնների նկարագրութեամբ, որ Գ. մատուցել է իր հայրենիքին որպէս մանկավարժ, որպէս գրող և որպէս հայրենասէր առհասարակ: Բարձրացնելով նրան մինչև երկինք՝ պ. Ծ. բացազանչում է. «Վրացի չպէտք է լինի այն մարդը, որ շնորհակալութեան փոխանակ՝ յանդիմանութիւններ ուղղէ այդպիսի գործողի հասցէին»... Հապա

պ. Գոգ. կարծիքները պատմութիւն գրելու մասին? Հապա նրա անտեղի արշաւանքները հայերի դէմ?—Պ. Մերեթելին այդ մասին ոչինչ չէ ասում և դրանով մի աւելորդ անգամ էլ ապացուցանում է պ. Զաւախ. այն գեղեցիկ միտքը, թէ աններելի է մի մարդու կամ մի ազգի լաւ կողմերը չափազացնել ու փքել, իսկ պակասութիւնները նուաստացնել... Բայց ծերունի բանաստեղծը դեռ էլի առաջ է դնում. նա համարում է երիտասարդ գիտնականին իր հայրենիքի թշնամի, անարժան որդի... Ասում է, որ Զաւ. «Գիտութիւն և հայրենասիրութիւն» գրուածքը մի ապերախտութիւն է մայր-Վրաստանի դէմ, որ նրա աստառը պարունակում է իր մէջ մի ինչ-որ պղտոր, տակետակ, խորամանկ բան, ու նրանից «շատ վատ հոտ է փչում»...

Եւ ահա այդ «վատ հոտը» դառնում է միանգամից և փրկութեան խարիսխ պ. Մերեթելու համար. նա հրաժարուելով հրաժարում է քննելու պ. Զաւախի շփոթ գեղեցիկ աշխատութիւնը ըստ էութեան... Նա տանել չէ կարող վերջինի այն խօսքերը, թէ վրացի մանկավարժի կարծիքները հակառակ են գիտութեան պրինցիպներին. «Ա՛յ, ի՞նչ ասեմ այդ սրտամեռ գիտութեանը, թէ ճիշտ նա է քեզ թելադրել այդ մտքերը», — բացազանչում է յուսահատաբար...

Մարրի ու Զաւախովի «նոր շկուայի» դէմ բերանը բացեց նաև քահանայ պ. Կարբելաշվիլին («Իվերիա», № 135), որ յայտնի է վրաց մամուլում իր տեղագրական յօդուածներով: Թէ ինչ աչքով է նայում հայր Կարբ. Մարրի վրայ, կարելի է շատ լաւ հասկանալ հէնց միայն նրա գրուածքի վերնագրից՝ «Մթթէ սրան կ'ասան գիտնական մարդ»... Տէր հայրն այն համոզմունքի է, որ յիշեալ գիտնականները ոչ միայն իրանք են ընդունում վրացութեան պատկանող ամեն մի սպիտակ բան սևի տեղ, այլև մեծ ճիգ են թափում նոյնը ընդունել տալու և ամենքին...

Վեցերորդ դարում Հռովմում ապրելիս է եղել Գրիգոր Առաջին պապը: Նոյն ժամանակներում Իտալիայի վանքերից մէկում հռչակուած է եղել իր մաքուր կենցաղով մի վարդապետ Պետրէ Իբերացի կամ Իվերացի անունով: Պապը իր «Dialogorum» լատիներէն գրքում յիշատակել է ի միջի այլ սրբերի նաև յիշեալ Պետրէին: Միջին դարերում այդ գիրքը թարգմանուել է վրացերէն և թարգմանիչը Պետրէ Իբերացուն անուանել է Պետրէ քարթվելի (վրացի), որպիսի կոչումով սա մտել է յետոյ նաև վրաց պատմագիրք «Բարթիւ-Յխովրեբայի» մէջ: Արդ, պ. Մարրը իր մի ուսերէն աշխատութեան մէջ համարձակութիւն է ունեցել ասելու, որ հաւանականօրէն յիշեալ Պետրէն

պէտք է իսպանացի լինի և ոչ վրացի (Իբերիա էր կոչուում մի ժամանակ ոչ միայն Վրաստանը, այլև Պիրենեան թերակղզին)։ Այդ առիթով ահա հայր Կարբ. բարձրացրել է հիմայ ահագին աղմուկ, յայտնելով որ հայագէտ ու «հայասէր» պրոֆեսսորը թշնամաբար է վարուել։ Նա պահանջում է որ Պետրէին պ. Մարրը վրացի ընդունէ, բայց դրա համար դժբախտաբար չի բերում ոչ մի համոզեցուցիչ փաստ...

Եւ ահա այդպիսի մի ինքնրստինքեան անմեղ հանգամանք առիթ է տալիս տէր հօրը անելու մի շարք յուսահատական ու կրքոտ եզրակացութիւններ. «է՛հ, բաւ է, պարոններ,—բացազանչում է նա,—երևում է, որ գիտնական պրոֆեսսորին նեղութիւն է պատճառում Յ-դ դարում Իտալիայում ապրող վրացի վարդապետի գործունէութիւնը. ո՞վ կարող է նրան արգելել ծաղրելու իր նախորդ մի գիտնականի (իմս Գեր. Պատկանեսանի) նման՝ մեր «Քարթլիս-Յխովրեբա»-ն և վրացերէն միւս հին պատմական կամ կրօնական գրուածները և հայ վարդապետի հնարած հեքիաթներ անուանելու նրանց։ Սրանց պէս գիտնական «մալաղները» (մուղալլախ, գլուխկոնծի) նոր չեն, հին են։ Այստեղ պէտք է շիտակ և միանգամընդմիշտ՝ ասել, որ գիտնական պրոֆեսսորը (Մարրը) նուաստացնում է այն ամենը, ինչ որ վերաբերում է վրաց գրականութեանը։ Եւ դրա հակառակ նա բարձրացնում է հայ գրականութեան պատիւը և վրաց գրականութիւնը հայկականին հպատակեցնում։ Այստեղ էլ հայկական հաշիւը յաղթանակ տարաւ, և վաղուց է, ինչ սուրբ տաճարում հանդէս է եկել այդօրինակ նենգութիւնը»...

Մայիսի 25-ին վախճանուեց թիֆլիսում 66 տարեկան հասակում վրաց գրական անխոնջ մշակ Պետրէ Ումիկաշվիլին։ Հանգուցեալը 20 տարուց աւել վրաց լեզուի ուսուցիչ էր տեղիս առաջին գիմնազիայում, իսկ ապա ծառայում էր մասնաւոր հիմնարկութիւններում։ Վրաց գրականութեան համար աշխատեց նա ամբողջ 40 տարի՝ տպելով հրապարակախօսական յօդուածներ, գրելով և թարգմանելով պիեսներ, խմբագրելով ու լոյս ածելով հին ձեռագիր, մանաւանդ գեղարուեստական բովանդակութիւն ունեցող աշխատութիւններ, հրատարակելով ժողովրդական, էժանագին գրքոյներ։ Նա մօտ 10 տարի հրատարակում էր նոյնպէս իր սեփական լրագիրը «Գիւղական Լրագիր» անունով։ Աւելի քան 15 տարի նա հաղորդում էր քաղուածներ վրաց լրագիրներին հայոց պարբերական թերթերից, որպիսի գործունէութիւնը

ապա նա վերջին տասը տարուայ ընթացքում ընդհատեց ընդհատվին: Հանգուցեալը, ինչպէս ինքը խոստովանում էր ծանօթներին, և ինչպէս տպագրուեց նորերս («Իվերիա», № 123) նրա ինքնակենսագրութեան մէջ, հայկական ծագումից էր: «Հօրս պապը,—գրում է նա այդտեղ—անցեալ դարում թողեց հայութիւնը. ես ինքս հռովմէադաւան կաթողիկ եմ»: Հայ գրականութեանը նա հետևում էր առաւելապէս ութսունական թուականներին և իր այդ գործունէութեան մասին նա ասում է ինքնակենսագրութեան մէջ հետևեալը. «Ես գրում էի կամ թարգմանում հայերէնից յօդուածներ հայոց գրողների և կեանքի մասին: Առաջ վրաց մամուլում հայերի մասին համարեա թէ ոչինչ չէր յիշուում. ես կամենում էի, որ վրացիք ճիշտ գաղափար կազմէին հայերի մասին՝ նոյնիսկ իրանց՝ հայերի արտայայտած հայեացքների հետ ծանօթանալովը»:

Հանգուցեալը անպայման օգտակար, բազմարդիւն ու համակրելի անդամ էր այն հասարակութեան, որին նա նուիրել էր իրան ամբողջապէս...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՔՆՆԵՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԵԽՕՍՈՒԹԻՒՆ

Ասրպե՛ «Երկերի ժողովածու, հասո՛ր առաջին:—Ղազկերեցի»: 272 էր. գինը 1 ր. Թարիզ, 1904:

Պ. Ատրպետի երկերի ժողովածուի մէջ մտել են նրա հետևեալ գրուածքները. 1) «Երախտապահանջ կամ Տժվժիկ», զրոյց՝ արտատպուած «Աղբիւր» ամսագրից (1897 թ.). 2) «Երկու վալի մի վիլայէթում կամ Այիշէ-խանում», վէպ՝ արտատպուած «Տարազ» շաբաթաթերթից (1895 թ.). 3) «Նաուախրխա», պատկեր՝ արտատպուած «Տարազ» շաբաթաթերթից (1893 թ.). 4) «Ծպտեալ սուլթան», արկած՝ արտատպուած «Աղբիւր» ամսագրից (1898 թ.). 5) Կաղ Նազօ», արտատպուած «Տարազ» շաբաթաթերթից (1893 թ.). 6) «Ղաղի», զրոյց՝ արտատպուած «Մշակ» լրագրից (1903 թ.). *)

*) Կարծեմ՝ այդ թուականը սխալ է ցոյց տրուած, սրովհետև զրոյցը գրուած է 1892 թ. հաւանականօրէն այդ զրոյցը տպուած է 1893-ին: